«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՔԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ »
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

N 77

08.01.2024թ.

Գեղարքունիքի մարզ, գ.Մաքենիս

Հեռ.՝ 094866275

Էլ.փոստ՝makenis@schools.am

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ.

Տեղեկացնում եմ Ձեզ, որ կազմակերպության <<ՆԶՊ>>/1 հաստիքային միավոր ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթը կկայանա 2024թ. հունվարի 25-ին ժամը 14:00-ին /հայտարարությունը հրապարակվել է «Գեղամա աշխարհ» թերթի թիվ 1 համարում 08.01.2024թ./:

Կից ներկայացվում է հայտարարության տեքստը:

Հարգանքով՝

Դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ա. Մխիթարյան

Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի « Մաքենիս գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի <<ՆԶՊ>> / 1 հաստիքային միավոր ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի հունվարի 8-ից մինչև հունվարի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. Հունվարի 25-ին ՝ ժամը 14:00-ին**, Մաքենիս գյուղի միջն. դպրոցում, հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Մաքենիս 1-ին խճուղի 16/2: Տեղեկությունների համար զանգահարել (094) 866275 հեռախոսահամարով: